«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ

ք. Երևան, Թոթովենցի 12/28

Tel. (374 10) 671119; (093) 671119; (099) 671119

«T.A.H.G. GRIG» LLC

Yerevan Totovent's 12/28

Tel. (374 10) 671119; (093) 671119; (099) 671119

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

## ՀԱՄԱՁԱՅՆ ՃՀԱ-Ի ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2025թ.

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀԱՄԱՁԱՅՆ ՃՀԱ-Ի ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Տնօրեն՝ Լ. Գրիգորյան

Ն.Գ.Ճ. Ա. Եղիկյան

ԵՐԵՎԱՆ - 2025թ.

PMFD-D6D6-74B8-3438

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-11129-25          05.12.2025թ.**

Օբյեկտ **Վերակառուցում, Հասարակական նշանակության շինության վերակառուցման,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

**նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ III** նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Երևան, Շենգավիթ Շիրակի փողոց 88/1, 01-011-0203-0004**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ / 02593108 / Երևան, Կենտրոն Արգիշտիի փողոց 1**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ 08082012-01-1179 , ԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՅՏԸ, ՆԱԽԱԳԾԻ ԷՍՔԻԶԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ:**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 05.06.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ   Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի   Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագրերը՝ 01-011-0203-0004: Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշման կատարվել է հողամասի գործառնական նշանակության փոփոխություն:<br>(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը) |
| 2. (*) Հողամասի չափսերը | 1.064176<br>(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա)) |
| 3. Հողամասի առկա վիճակը | Վկայականով ամրագրված շինություններ:<br>(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն) |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | Շիրակի փողոց:<br>(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն) |

| | |
|---|---|
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:<br>(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | Հասարակական նշանակության շինություններ, բնակելի շենքեր, Շիրակի փողոց:<br>(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | ---<br>(հուշարձանի անվանումը) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | ---<br>(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյկտների, ինժեներարանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

## Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն    Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | Մշակել Շիրակի փողոց հ.88/1 հասցեում հասարակական նշանակության շինության վերակառուցման աշխատանքային նախագիծ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ08082012-01-1179 վկայականով ամրագրված հողատարածքի սահմաններում:<br>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | --- |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | --- |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | Վերակառուցման արդյունքում պահպանել գոյություն ունեցող շինության առավելագույն բարձրությունը:<br>սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | --- |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | Համաձայն նախագծի: |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) | Համաձայն նախագծի: |

| | |
|---|---|
| 9.7 այլ պահանջներ | • Նախագծով հնարավոր է նախատեսել շինության վերակառուցում, անտրեսոլային հարկի իրականացում, ներքին հարկերի բաժանում, հիմնանորոգում, ամրակայում, սեյսմազինվածության ավելացում, վերահատակագծում, բացվածքների ձևափոխություն, փակում, նորերի բացում, շրջանակների փոխարինում նորերով, մուտքային հանգույցների ձևափոխում, էվակուացիոն աստիճանների իրականացում, վերելակների տեղադրում և այլն: • Հարևան հողամասեր և շինություններ նայող ճակատներում բացվածքներ նախագծել նորմատիվ հեռավորությունների ապահովման դեպքում: • Տանիքը ջրահեռացումը նախատեսել կազմակերպված՝ բացառելով անձրևաջրերի թափանցումը հարևան հողատարածքներ: • Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները: |
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | Համաձայն պատվիրատուի առաջադրանքի: |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | --- |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն: |
| 12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում | Բաժանորդ է:<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2 (*) Էլեկտրամատակարարում | Բաժանորդ է:<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | ---<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | ---<br>(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | --- |
| 12.6. աղբահանություն | --- |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | Կազմակերպել տարածքի ջրահեռացումը:<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | Տարածքը բարեկարգել և կանաչապատել:<br>(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Երկաթբետոն, մետաղ, ապակի, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | ---<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներներ | Նախատեսել հրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ:<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | Նախատեսել հաշմանդամների և ԲՍԽ-երի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծումը (սարքավորման և կահավորման ընտրությունը) կատարելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան: |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | ---<br>(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները) |

| | |
|---|---|
| 20. Շինարարության կազմակերպում | Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ` նկատի ունենալով ՀՀ կառավարության12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև` Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները։<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | մինչև 05.06.2027թ., նախագծման փուլերը` աշխատանքային նախագիծ,<br>(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Պարզ փորձաքննություն<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը` հղում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | ---<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորոջությունը` N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | ---<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով) |
| 25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում | Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ։, տեխնիկական վիճակի (սեյսմիկ) զննության եզրակացություն<br>(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները` հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում` ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | ---<br>(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները` հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում` ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ) |
| 27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ | --- |
| 28. Այլ պայմաններ | Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. N273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N128-Ն հրամանով հաստատված դրույթներին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

**«ՍԵՅՍՄԱՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ**

**Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության**
**Պետ. լիցենզիա ՔՊԼ-001177 տրված 13.09.2024թ.**

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 88/1 հասցեում գտնվող ԵԱՍՄ արտադրական մասնաշենքի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001177, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՒՅՈՒՄ

ՏՐՎԱԾ Է

2024-09-13, «ՍԵՅՍՄԱՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ 63-6, 63, 6

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

UG79-ABBF-C3E7-FD1F

**ԵՐԵՎԱՆ 2025**

**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»**

«Սեյսմանախագիծ» ՍՊԸ տնօրեն՝

_______ Ռ. Հայրապետյան

«10» 09 2025թ.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 88/1 հասցեում գտնվող ԵԱՍՄ արտադրական մասնաշենքի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ**

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմանախագիծ» ՍՊ ընկերության միջև առ 31.03.2025թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-25/58 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Սեյսմանախագիծ» ՍՊԸ կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա ՔՊԼ-001177 տրված 13.09.2024թ.) կատարվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 88/1 հասցեում գտնվող ԵԱՍՄ արտադրական մասնաշենքի (այսուհետ՝ մասնաշենք) դիտողագործիքային հետազննություն և չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

Մասնաշենքի փաստացի տեխնիկական վիճակի գնահատման նպատակով ուսումնասիրվել և պարզաբանվել են մասնաշենքի կառուցվածքային համակարգի կոնստրուկտիվ լուծումները, իրականացվել է բոլոր կոնստրուկտիվ տարրերի ու շինվածքների (երկաթբետոնե հիմնակմախք, պատեր, միջհարկային ծածկերի ու վերնածածկի ե/բ սալեր, սանդուղքներ, միջնորմներ և այլն) հետազննություն: Ուսումնասիրվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի ու ձևախախտումների առկայությունը, դրանց բնույթն ու հնարավոր պատճառները, ամրանների բետոնե պաշտպանիչ շերտի հաստությունը և փաստացի վիճակը, ամրանների և պողպատե կոնստրուկցիաների կոռոզիայի առկայությունը, որոնց տրվել են համապատասխան որակական ու քանակական գնահատականներ: Որոշվել են կոնստրուկտիվ տարրերի ու շինվածքների մաշվածությունը, վնասվածության բնույթն ու աստիճանը:

Մասնաշենքի կոնստրուկտիվ տարրերի փաստացի տեսքերը, ինչպես նաև հատկանշանական վնասվածքները, ճաքերը, ձևախախտումներն ու թերությունները լուսանկարվել են, որոնցից առավել բնութագրականները համապատասխան

**Մասնաշենքի ծավալահատակագծային լուծումները**

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 88/1 հասցեում գտնվող ԵԱՍՄ արտադրական մասնաշենքը կառուցվել է 1970-ական թվականներին և վերակառուցվել 2000-ական թվականների երրորդ տասնամյակում, տեղադրված է մեղմ թեքությամբ տեղանքում: Այն մեկ, մասամբ` երկու հարկանի, 36.4x44.1մ եզրային առացքաչափերի, ուղղանկյունաձև հատակագծով շենք է (տես նկ. 1, 2): Մասնաշենքի միահարկ հատվածամասն ունի 6.1մ հարկի բարձրություն, երկհարկ հատվածամասի առաջին հարկն ունի 4.0մ, իսկ երկրորդ հարկը 2.1մ բարձրություն: Առաջին հարկի հատակի նիշը համապատասխանում է տեղանքի համահարթեցման նիշին:



Նկ. 1 Մասնաշենքի տեղադիրքը ըստ Google map-ի



Նկ. 2 Մասնաշենքի ճակատների տեսքեր

**Մասնաշենքի կոնստրուկտիվ լուծումները**

Մասնաշենքի կոնստրուկտիվ լուծումը տրված է հավաքովի երկաթբետոնե (ե/բ) հիմնակմախքով, շրջանակային սխեմայով: Հիմնակմախքն իրականացվել է հավաքովի ե/բ գծային էլեմենտներով: Մասնաշենքում երկայնական ուղղությամբ սյուների առանցքային հեռավորությունները 6.0մ են, իսկ լայնական ուղղությամբ՝ 18.0մ:

Ի սկզբանե գոյություն ունեցող երկհարկանի հատվածամասի կոնստրուկտիվ լուծումը տրված է քարե շարվածքի կրող ու կապող պատերով և միջհարկային ծածկի ու վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով:

Մասնաշենքի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը միահարկ հատվածամասի սյուների տակ կետային են, իսկ պարփակող պատերի տակ՝ ժապավենային:
- Երկհարկանի հատվածամասի հիմքերը ժապավենային են, իրականացված են խամքարաբետոնով:
- Հավաքովի ե/բ սյուներն ունեն 40x40սմ չափերի քառակուսի լայնական հատույթ: Կրող պարզունակներն ունեն 40x50(h)մ չափերի ուղղանկյունաձև լայնական հատույթ:
- Երկհարկանի հատվածամասի պատերն իրականացվել են տուֆաքարերի «Միդիս» տիպի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ և ունեն 50-55սմ հաստություն: Պատերի դրսի երեսաշարն սրբատաշ է:
- Միահարկ հատվածամասի պարփակող պատերն իրականացված են պեմզաբետոնե բլոկների շարվածքով և հանդիսանում են կարկասի լցաշար:
- Ի սկզբանե երկհարկանի հատվածամասի ծածկերն իրականացվել են հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերով, իսկ միահարկ հատվածամասի ծածկը՝ հավաքովի ե/բ կողավոր սալերով:
- Միջնորմներն իրականացվել են պեմզաբետոնե սալերի շարվածքով:
- Տանիքը ի սկզբանե եղել է հարթ, ծածկված գլանափաթեթային նյութերով:
- Սալվածքն ասֆալտաբետոնից է և մասամբ բետոնից:

2000-ական թվականների երրորդ տասնամյակում «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից մշակվել է մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների նախագիծ (տես նկ. 3) և կատարվել են վերակառուցողական աշխատանքներ, մասնավորապես.

- Երկհարկանի հատվածամասի առաջին հարկի կլորանցքավոր սալերով ծածկը վերակառուցվել է միաձույլ ե/բ ծածկի:
- Միահարկ հատվածամասը մասամբ վերակառուցվել է երկու հարկի: Այդ հատվածամասում իրականացվել է լրացուցիչ միաձույլ ե/բ շրջանակային հիմնակմախք: Առաջին հարկի ծածկն իրականացվել է միաձույլ ե/բ-ով:

- Վերնածածկն իրականացվել է մետաղական ֆերմաներով և ծածկված է սենդվիչ պանելներով, մասամբ՝ մետաղական ալիքավոր թերթերով:
- Գոյություն ունեցող հիմնակմախքի սյուներն ուժեղացվել են մետաղական գոտեկապով: Մետաղական գոտեկապի համար որպես հակակոռոզիոն պաշտպանիչ շերտ իրականացվել է ցեմենտավազե սվաղի շերտ՝ պողպատե ցանցի կիրառմամբ:




Նկ. 3 Դրվագներ նախագծային լուծումներից

**Ե/բ կոնստրուկցիաների բետոնի ամրության որոշումը գործիքային եղանակով**

Մասնաշենքի ե/բ կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունը որոշվել է չքայքայող եղանակով՝ «Օնիկս 2» սկլերոմետրի միջոցով (գործարանային համարը՝ 525), ՀՀ տարածքում ազգային ստանդարտի կարգավիճակով գործող ԳՕՍՏ 525 «Բետոններ. Ամրության որոշումը չքայքայող վերահսկման մեխանիկական մեթոդներով» միջպետական ստանդարտի և ՀՍՏ ԵՆ 12504-2:2001, ՀՍՏ ԵՆ 12504-3:2005 եվրոպական ստանդարտների պահանջներին համապատասխան (տես նկ. 4):

Ամփոփելով չքայքայող եղանակով մասնաշենքի ե/բ հիմնակմախքի (սյուներ, պարզունակներ և այլն) բետոնի փաստացի սեղմման ամրության որոշված արժեքները ստացել ենք, որ արժեքներն ընկած են 26-33ՄՊա սահմաններում, որը համապատասխանում է B20-B25 դասի բետոնին:




Նկ. 4 Ե/բ հիմնակմախքի բետոնի փաստացի ամրության որոշման դրվագներ

**Մասնաշենքի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքները և գնահատականը**

Տեղազննությամբ պարզվել է, որ մասնաշենքի ինչպես կրող, այնպես էլ ոչ կրող կոնստրուկտիվ տարրերում առկա են հետևյալ վնասվածքները և ձևախախտումները.

- Ավտոհանգրվանի, աղ ու ավազի ամբարման հատվածամասերում հավաքովի ե/բ սյուներում մեքենա-մեխանիզմների հարվածից առաջացել են մեխանիկական վնասվածքներ: Այդ հատվածներում, պայմանավորված աղի առկայությամբ, սյուների ուժեղացված մետաղական կոնստրուկցիաներն ենթարկվել են տեղային ուժեղ կոռոզիայի (տես նկ. 5):
- Մետաղական ֆերմաների որոշ հանգույցներ չեն ներկվել հակակոռոզիոն պաշտպանիչ շերտով, ինչի հետևանքով այդ տեղամասերն ենթարկվել են տեղային զգալի կոռոզիայի (տես նկ. 6):
- Առանձին տեղամասերում բետոնացումն իրականացվել է ցածր որակով, բետոնի վատ թրթռացմամբ, ինչի հետևանքով ամրանները չունեն բավարար հաստությամբ բետոնե պաշտպանիչ շերտ, կամ պաշտպանիչ շերտը ընդհանրապես բացակայում է: Այդ տեղերում ամրաններն ենթարկվել են տեղային զգալի կոռոզիայի (տես նկ. 7):



Նկ. 5 Հավաքովի ե/բ սյուների վնասվածքների տեսքերը



Նկ. 6 Դրվագներ ֆերմաների հանգույցներից

 

Նկ. 7 Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների վնասվածքների ու թերությունների տեսքերը

**Հիմնվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք**.

Հիմնվելով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 88/1 հասցեում գտնվող ԵԱՍՄ արտադրական մասնաշենքի հետազննության արդյունքներին, եզրակացնում ենք.

1. Ելնելով մասնաշենքի շահագործման ընթացքում առաջացած վնասվածքների բնույթից, չափերից ու ծավալներից, և առաջնորդվելով ՀՀ ներկայումս գործող «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020 շիննորմերի 24 աղյուսակի պահանջներով, մասնաշենքի **վնասվածությունը գնահատվում է 2-րդ աստիճանի** (վնասվածքի մակարդակը՝ կոնստրուկցիաների չափավոր վնասվածքներ):

Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի առ 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» 118 կետի՝ մասնաշենքի **փաստացի տեխնիկական վիճակը՝ ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստիճանի հետ համատեղ հաշվառմամբ գնահատվում է 2-րդ աստիճան (բավարար)**, այն է՝ կոնստրուկտիվ տարրերն ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջում են որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին:

2. Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների», մասնաշենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը (մասնաշենքի վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է **միջին**, այն է՝ երբ օբյեկտի տարածքում 8-9 բալ ըստ MSK-64 սանդղակի (գետնի սպասվելիք առավելագույն արագացումը amax=0.3g) հնարավոր երկրաշարժի ժամանակ շենքի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ զգալի վնասվածքներ՝ վնասվածքի աստիճանը 3-րդ համաձայն՝ ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի աղյուսակ 24-ի:

3. Ելնելով մասնաշենքի գործառնական նշանակությունից ու կարևորության աստիճանից և առաջնորդվելով ՀՀ ներկայումս գործող «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում,

վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20-06-2014 նորմերով, շենքի հետագա անվտանգ շահագործման և նույն նպատակին ծառայեցնելու համար վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակն ընդունվում է **«Վերականգնում»**:

4. Հաշվի առնելով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց թիվ 88/1 հասցեում գտնվող ԵԱՍՄ արտադրական մասնաշենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների առանձնահատկությունները, փաստացի տեխնիկական վիճակը, վնասվածության աստիճանը, առաջարկվում է մասնաշենքի «Վերակագնումն» իրականացնել հետևյալ միջոցառումների կատարմամբ.

- Քանի որ բետոնացումն առանձին տեղամասերում իրականացվել է ցածր որակով, առաջարկվում է, ինչպես այդ տեղամասերն, այնպես էլ ուժեղացված սյուների վնասվածքները վերականգնել՝ պահպանելով հետևյալ դրույթները.

– Մետաղական խոզանակի կամ այլ մաքրող գործիքների օգնությամբ կատարել ամրանային ձողերի մշակում:

– Մաքրված ամրանները մշակել միակոմպանենտ հակակոռոզիոն ցեմենտային շաղախով (օրինակ Mapefer 1K):

– Բետոնի բացակայող ծավալի վերականգնման համար կիրառել տիկսոտրոպային տիպի արագ պնդացող վերականգնող մածիկ (օրինակ Mapegrout Thixptropic):

– Գոյություն ունեցող բետոնի և նոր նախատեսվող բետոնի հուսալի կապակցման նպատակով, մածիկի կիրառումից առաջ, մշակվող մակերեսին ստեղծել նվազագույնը 5մմ խորությամբ անհարթություններ, այնուհետև լվանալ ջրով:

– Բետոնի վերկանգնման ընթացքում խստագույնս պահպանել կիրառվող մածիկի տեխնոլոգիական պահանջները:

- Մետաղական ֆերմաների կոռոզիայի ենթարկված տեղամասերը մաքրել մետաղական խոզականով և դրանք ներկել հակակոռոզիոն թթվածնակայուն ներկերով:

Եթե մասնաշենքի վերականգնման շինարարական աշխատանքներն իրականացնելու ընթացքում բացահայտվի լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն, որոնք ներկայացված չեն սույն եզրակացությունում, ապա դրանք պետք է լուծվեն աշխատանքային կարգով, նախագծում կատարելով համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ:

**Կատարողներ՝**

«Սեյսմանախագիծ» ՍՊԸ
գլխավոր ճարտարագետ, տ.գ.թ.՝ Զ. Խլղաթյան

Գլխավոր մասնագետ՝ Մ. Մնացականյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 7 սեպտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀՄ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Շիրակի փողոց 88/1

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անհատույց օգտագործման պայմանագիր 02.09.2021-14499

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0203-0004
Մակերեսի չափը (հա)՝ 1.064176
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Խառը կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07092021-01-0247, գաղտնաբառ՝ SWYHYWCUUADB**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 01-011-0203-0004-001 | Բնակելի տուն | 968.34 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 2 | 01-011-0203-0004-002 | Արհեստանոց | 1546.93 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 3 | 01-011-0203-0004-003 | Բոքսեր | 496.74 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 4 | 01-011-0203-0004-004 | Պահակատուն | 18.36 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 5 | 01-011-0203-0004-005 | Լողավազան | 123.71 քմ | ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ երեք տարի:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07092021-01-0247, գաղտնաբառ՝ SWYHYWCUUADB**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն նախագծում մշակված է Երևան քաղաքի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքային նախագծի ճարտարապետական մասի գծագրերը:

Առաջին հարկում ավտոսպասարկման կետի, աղի և ավազի պահեստի հատակը իրականացված է և վերանորոգման կարիք չունի, պատերը սվաղվում են ցեմենտ-ավազե շաղախով: Միջանցքների, արհեստանոցների, ինժեներների սենյակի, անցակետի հատակները իրականացվում են պրեսգրանիտե սալերից, պատերը սվաղվում են գիպսոնիտե շաղախով և ներկվում են լատեկսային ներկով: Սանհանգույցների հատակները իրականացվում են կերամիկական սալիկներից, պատերը երեսապատվում են հախճասալով, առաստաղները՝ պլաստիկատից: Աստիճանավանդակների բազրիքները իրականացվում են ալյումինե խողովակներից:

Երկրորդ հարկում նախատեսվում են վարչական մասի սենյակները և մեկ պահեստ՝ առանձին աստիճանավանդակով և վերելակով: Պահեստի հատակը իրականացվում է ցեմենտ-ավազից, պատերը սվաղվում են ցեմենտ-ավազե շաղախով: Վարչական մասի բոլոր աշխատասենյակներում իրականացվում են լամինատե հատակներ, պատերը սվաղվում են գիպսոնիտե շաղախով և ներկվում են լատեկսային ներկով: Առաստաղները երեսապատվում են գիպսաստվարաթղթով: Միջանցքներում հատակները իրականացվում են պրեսգրանիտե սալերից: Սանհանգույցների հատակները իրականացվում են կերամիկական սալիկներից, պատերը երեսապատվում են հախճասալով, առաստաղները՝ պլաստիկատից:

Արտաքին պատերը նախատեսվում է սվաղել ցեմենտ-ավազե շաղախով ամրանային ցանցով և իրականացվում է մարմարափշրանքներով դեկորատիվ սվաղ:

Կառուցապատման մակերեսը - 1623.44 մ$^2$

Նախագիծը իրականացված է համաձայն ՀՀ-ում գործող շինարարական նորմերի:

# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| N/N | ԹԵՐԹ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԷՋԸ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | ՃՇ-1 | ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | 1 |
| 2 | ՃՇ-2 | ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000 | 2 |
| 3 | ՃՇ-3 | ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500 | 3 |
| 4 | ՃՇ-4 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՉԱՓԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 4 |
| 5 | ՃՇ-5 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՉԱՓԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 5 |
| 6 | ՃՇ-6 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 6 |
| 7 | ՃՇ-7 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 7 |
| 8 | ՃՇ-8 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՄԱԿՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 8 |
| 9 | ՃՇ-9 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՄԱԿՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 9 |
| 10 | ՃՇ-10 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:150 | 10 |
| 11 | ՃՇ-11 | ՏԱՆԻՔԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ՃԱՂԱՇԱՐ Մ 1:20 | 11 |
| 12 | ՃՇ-12 | ՃԱԿԱՏՆԵՐ 1-13; 13-1 ԱՌԱՆՑՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ Մ 1:150 | 12 |
| 13 | ՃՇ-13 | ՃԱԿԱՏ Ի-Ա ԱՌԱՆՑՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ Մ 1:150 | 13 |
| 14 | ՃՇ-14 | ԿՏՐՎԱԾՔՆԵՐ 1-1; 2-2 Մ 1:150 | 14 |
| 15 | ՃՇ-15 | ԴՌՆԵՐԻ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԷՍՔԻԶՆԵՐ Մ 1:25 | 15 |
| 16 | ՃՇ-16 | ՎԻՏՐԱԺՆԵՐԻ ԷՍՔԻԶՆԵՐ Մ 1:25 | 16 |
| 17 | ՃՇ-17 | ՎԻՏՐԱԺՆԵՐԻ ԷՍՔԻԶՆԵՐ Մ 1:25 | 17 |
| 18 | ՃՇ-18 | ՎԻՏՐԱԺՆԵՐԻ ԷՍՔԻԶՆԵՐ Մ 1:25 | 18 |
| 19 | ՃՇ-19 | ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ, ԴՌՆԵՐԻ ԵՎ ՎԻՏՐԱԺՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | 19 |
| 20 | ՃՇ-20 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | 20 |
| 21 | ՃՇ-21 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | 21 |
| 22 | ՃՇ-22 | ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | 22 |
| 23 | ՃՇ-23 | ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | 23 |
| 24 | ՃՇ-24 | ՆԵՐՔԻՆ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ ԱԼՅՈՒՄԻՆԵ ԲԱԶՐԻՔԻ ՖՐԱԳՄԵՆՏ ԳԵՏՆԱԽԱՐԻՍԽԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ | 24 |
| 25 | ՃՇ-25 | ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ, ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 25 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ<br>ՀԱՄԱՁԱՅՆ ՃՀԱ-Ի ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ | | | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | | |
| | | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՏՆՕՐԵՆ | Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | ԱՆ | Ճ-1 | 25 |
| ՆԳՃ | Ա. ԵՂԻԿՅԱՆ | | ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ | | |

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:2000
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ




ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՇԵՆՔԸ ՈՐԸ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ՆԱԽԱԳԾՈՎ ԳՏՆՎՈՒՄ Է ԴԻՏԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԱՄԱՁԱՅՆ ՃՀԱ-Ի ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ | | | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | | |
| | | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՏՆՕՐԵՆ | Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | [signature] | | ԱՆ | Ճ-2 | 25 |
| ՆԳՃ | Ա. ԵՂԻԿՅԱՆ | [signature] | ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000 | «Թ.Ա.Յ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ | | |

## ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500




ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

Երևանի քաղաքապետ__________ Տ. Ավինյան

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
